EaP | Eastern Partnership

ՈՒԺԵՂ ԿԱՆԱՅՔ, ՈՒԺԵՂ ՀԱՅԱՍՏԱՆ

#strongertogether

Եվրոպական միությունը 60 տարի շարունակ անխոնջ կերպով աշխատել է կանանց իրավունքների պաշտպանության ուղղությամբ և վերջիններիս իրենց ամբողջական ներուժն իրացնելու հնարավորություն է ընձեռել: Գենդերային հավասարությունը ԵՄ Արևելյան գործընկերության նախաձեռնության սրտում է: Այն կենսական նշանակություն ունի ինչպես կանանց, այնպես էլ տղամարդկանց անձնական կյանքում և նաև վճռական նշանակություն ունի երկարաժամկետ ժողովրդավարական զարգացման համար: Հայաստանի հետ իր համագործակցության շրջանակներում ԵՄ-ն բերում է իրական փոփոխություններ՝ ուժեղացնելով **գործարարությամբ զբաղվող կանանց**, ապահովելով **որակյալ կրթության հնարավորություններ** և առաջ մղելով **արդար հասարակության** գաղափարը:

Ի՞ՆՉ Է ԱՐՎՈՒՄ

- **ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԵՐ**
  Պետական քաղաքականություններում գենդերային հիմնահարցերի հաշվի առնում և գենդերային հարցերով վիճակագրության ձևավորում
- **ՆՈՐ ԵՎ ԲԱՐԵԼԱՎՎԱԾ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆ**
  Հակախտրականության և ընտանեկան բռնության մասին օրենքների ընդունում և կիրառում
- **ԱՎԵԼԻ ՇԱՏ ԿԱՆԱՅՔ ԲԻԶՆԵՍՈՒՄ**
  Տեղական բանկերի միջոցով վարկերի հասանելիության ապահովում կանանց կողմից ղեկավարվող ձեռնարկությունների համար
- **ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԵՎ ԿԱՐԻԵՐԱՅԻ ՆՈՐ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**
  Եվրոպայում փոխանակման ծրագրերի լայն առաջարկ՝ «Էրազմուս+» ծրագրի միջոցով
- **ԵՐԻՏԱՍԱՐԴ ԿԻՆ ԱՌԱՁՆՈՐԴՆԵՐ**
  Երիտասարդ կանանց ակտիվ մասնակցության խթանում՝ «ԵՄ-ն երիտասարդների համար» (EU4Youth) ծրագրի միջոցով

ԿԱՆԱՅՔ ԲԻԶՆԵՍՈՒՄ

ԵՄ-ն Հայաստանում կին ձեռներեցներին աջակցում է «**Կանայք բիզնեսում**» ծրագրի միջոցով, որն իրականացվում է Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի կողմից (ՎԶԵԲ): Ծրագրի միջոցով աջակցությունը ներառում է կանանց կողմից ղեկավարվող կազմակերպություններին **գործարար խորհրդատվության, ուսուցման** և **մենթորության տրամադրում**, ինչպես նաև՝ տեղական բանկերին տրամադրված հատուկ վարկային գծերի միջոցով **ֆինանսավորում**:

2019 թ.-ին Հայաստանում **226** կին ձեռներեցներ ՓՄՁ-ների համար ԵՄ աջակցության ծրագրերի շրջանակներում գրեթե **1 միլիոն եվրո** ընդհանուր ծավալով **վարկեր**, իսկ **143**-ն էլ՝ ավելի քան **1,5 միլիոն եվրո** ծավալով **դրամաշնորհներ** ստացան: Ավելի քան **2500**-ը օգտվել են **խորհրդատվական ծառայություններից**: Աջակցություն ստացած ընկերությունների **շրջանառությունն** աճել է գրեթե **36 միլիոն եվրոյով**, իսկ աջակցության արդյունքում ստեղծվել է **1592 նոր աշխատատեղ**:

Իմացիր, թե ինչպես կարող ես մասնակցել՝
www.ebrdwomeninbusiness.com

«Լսեցի, որ Սևանում կա նորարարական բիզնես կենտրոն, որն օգնում է երիտասարդներին, ովքեր ունեն գաղափար, բայց չգիտեն որտեղից սկսել»:

«**Քաղաքապետները հանուն տնտեսական զարգացման**» ծրագրի շնորհիվ **Զոյա Սաֆարյանը** սովորեց բիզնես պլան մշակել և այժմ նպատակ ունի մարքեթինգային կենտրոն բացել:

Հայաստանում կին ձեռներեցները հնարավորություն ունեն օգտվելու նաև «ԵՄ-ն բիզնեսի համար» (EU4Business) նախաձեռնության ներքո տրամադրվող մի շարք այլ ֆինանսավորման ու խորհրդատվական ծառայություններից:

Իմացիր ավելին՝
www.eu4business.ge

ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԿԱՆԱՆՑ ՀԱՄԱՐ

«Ես սիրահարվեցի այս աշխատանքին: Ծրագիրն ինձ հնարավորություն տվեց նոր մասնագիտություն ու հավելյալ հմտություններ ձեռք բերել»:

Սվետա Խաչատրյանը հաշմանդամություն ունեցող իգական սեռի առաջին ներկայացուցիչն է Գավառում, ով EU4Youth-ի աջակցությամբ որոշել է զբաղվել անասնաբուժությամբ:

ԵՄ-ն երիտասարդների համար (EU4Youth)

- **EU4Youth-ը** երիտասարդներին աջակցում է **աշխատանքային հմտություններ** զարգացնելու գործում, խրախուսում և ներդրումներ է կատարում **երիտասարդական ձեռներեցության** ուղղությամբ՝ առանձնակի ուշադրություն դարձնելով խոցելի և անապահով համայնքների վրա:
- ԵՄ-ն սահմանել է նպատակ՝ «EU4Youth» ծրագրի շրջանակներում **տրամադրվող աջակցության 75%-ը երիտասարդ կանանց ուղղելու** վերաբերյալ:
- 2018-2020 թթ. ժամանակահատվածում Հայաստանում **3461** երիտասարդ կին օգտվել են «EU4Youth» դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում կազմակերպված **դասընթացներից և սեմինարներից**, **147**-ը մասնակցել են պրակտիկաների, 86-ն՝ աջակցություն ստանալուց հետո, դարձել են **ինքնազբաղված**, իսկ **12-ն էլ ստացել են դրամաշնորհներ**՝ իրենց բիզնեսը հիմնելու համար:

www.euforyouth.eu

ԱՐԴԱՐ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵՄ-ի կողմից ֆինանսավորվող «**Ընտանեկան բռնության զոհ դարձած կանանց համար արդարադատության մատչելիության ապահովում**» ծրագիրն աջակցում է Հայաստանին՝ կանանց իրավունքների միջազգային ստանդարտները ներքին օրենսդրությունում կիրարկելու գործում: Ծրագիրն օրինապահ մարմինների պաշտոնատար անձանց աջակցել է ընտանեկան բռնության դեպքերի ժամանակ իրենց գործողությունները համակարգելու գործում:

Իմացիր ավելին՝

www.coe.int/en/web/genderequality/strengthening-access-to-justice-for-women-victims-of-violence-2019-2021-

ԵՄ–Ն ՀԱՆՈՒՆ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ (EU4GENDER EQUALITY)

Եվրոպական միության կողմից Արևելյան գործընկերության շրջանակներում ֆինանսավորվող այս տարածաշրջանային ծրագիրը նպատակ ունի ամրապնդել կանանց և տղամարդկանց **հավասար իրավունքներն ու հնարավորությունները**՝ գենդերային դերերի շուրջ **սոցիալական ընկալումները փոխելու, գենդերային կարծրատիպերը հաղթահարելու** և երեխաների խնամքի և այլ տնային պարտականությունների հարցերում **տղամարդկանց մասնակցությունը մեծացնելու** միջոցով:

COVID-19 համավարակի ընթացքում դպրոցների փակման արդյունքումընտանիքների և հատկապես կանանց ծանրաբեռնվածությամբ պայմանավորված՝ ծրագիրը նախաձեռնել է «**Look Beyond**» խորագրով նոր արշավ, որը հասարակությանը խրախուսում է նայել տղամարդկանց և կանանց ավանդական դերերից անդին, որտեղ տնային գործերը և երեխաների խնամքը սեռ չեն ճանաչում:

Էրազմուս +»

ԵՄ-ն իր «Էրազմուս +» ծրագրի միջոցով Հայաստանում երիտասարդ կանանց և տղամարդկանց Եվրոպայում փոխանակման հնարավորությունների լայն ընտրանի է առաջարկում:

«ԷՐԱԶՄՈՒՍ +»-Ի ՓՈԽԱՆԱԿՈՒՄՆԵՐԸ ՆԵՐԱՌՈՒՄ ԵՆ.

- Եվրոպայում սովորելու կրթաթոշակներ
- Ուսանողական փոխանակումներ
- Երիտասարդական փոխանակումներ
- Եվրոպական համերաշխության կորպուս
- Հնարավորություններ երիտասարդական ոլորտի աշխատողների համար
- Երիտասարդների ներգրավում բարեփոխումների վերաբերյալ երկխոսություններում

- 2015 – 2019 թթ. ժամանակահատվածում **Հայաստանից 2491 ուսանողներ ու դասախոսներ** ԵՄ ֆինանսավորման շնորհիվ հնարավորություն են ստացել սովորելու կամ դասավանդելու ԵՄ տարածքում: Հայաստանից **100 մագիստրանտներ** ստացել են ամբողջական «Էրազմուս» կրթաթոշակ:
- Շուրջ **8000 երիտասարդներ** և երիտասարդական ոլորտի աշխատողներ մասնակցել են կարճաժամկետ փոխանակումային, շարժունակության, վերապատրաստման և կամավորական ծրագրերի:

«Գյուղական փոստային բաժանմունքից ուղարկված դիմումն ինձ համար չորս տարբեր երկրներում ուսում ստանալու ճանապարհ հարթեց և սահմանեց կարիերայիս ուղղությունը»:

Սաթենիկ Խաչատրյանն «Էրազմուս +» ծրագրի շրջանակներում սովորել է Նորվեգիայում, Իռլանդիայում, Մալթայում և Շվեդիայում: Այժմ նա վերադարձել է հայրենիք և աշխատում է երեխաների պաշտպանության ու կրթության ոլորտում:

Իմացիր ավելին՝ «Էրազմուս +»-ը՝ Հայաստանում. բոլոր հարցերի պատասխանները՝

www.euneighbours.eu/en/east/stay-informed/cards/erasmus-armenia

«Այս դասընթացների ընթացքում մենք բավական մեծ փոփոխություն արձանագրեցինք օրինապահ մարմինների պաշտոնյաների պատկերացումներում. նրանք սկսեցին գիտակցել, որ այս չարիքի դեմ պայքարի համար իրենք հատուկ գենդերային մոտեցման կարիք ունեն»:

Լիզա Գրիգորյան, Երևանի Ընդհանուր իրավասության դատարանի դատավոր:



Իմանալ ավելին՝

ԵՄ–ն հանուն գենդերային հավասարության. միասին ընդդեմ գենդերային կարծրատիպերի և գենդերային բռնության